ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«09» 12 2024 թ.
№ ԳԱՀՊՁԲ-24-1803

«ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01340252)
տնօրեն Յ. Կարապետյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 125/3
էլ. հասցե՝ Mirrors.llc2551@gmail.com
հեռ. 091 69 00 10

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի միջև 06.05.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-16/1-2 ծածկագրով գնման պայմանագրի և դրա հիման վրա 24.06.2024թ. կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ն 2024թ. համաձայնագիր կնքելուց հետո 120 օրվա ընթացքում պետք է մատակարարեր ընդհանուր՝ 1 հատ էլեկտրոնային չափման սարքեր (Մոդուլյացիայի չափիչ), սակայն «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի կողմից 12.11.2024թ. ներկայացվել է դիմում (Մուտք ՊՆՏ-3575 առ 12.11.2024թ.)՝ Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման անհնարինության պատճառով Պայմանագիրը միակողմանի լուծելու խնդրանքով, այսպիսով «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ն հրաժարվել է կնքված պայմանագիրը կատարելուց, և պարտավորվել է վճարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. դեկտեմբերի 09-ին, միակողմանի ամբողջությամբ, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է **1 100 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է **1 650 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL: (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել **67 725** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 12.11.2024թ. ներառյալ և **45 150** ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. դեկտեմբերի 19-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարները, ապա «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. դեկտեմբերի 19-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի կողմից տույժի, տուգանքի, պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա՝ տույժի, տուգանքի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ